


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐԱՌԹԻՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ,

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱՓ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆ

Եզրագրութիւն՝ 6 սաւար տրեկն. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան տրեկն 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՔԱՐՈՁԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Նիւ-Եօքը հրատարակուող Հայ թերթին մէջ սա զարմանալի տեղեկութիւնները կը կարդանք՝ Ուօրջ լրագրէն արտատպուած.

«Հինգ հարիւր հայ խնամած էին ի Ս. Ոսկերեան եկեղեցին և ունկնդրեցին այն հրաբորբը բողբոյն զոր Խաղ վարդապետը որոտաց ընդդէմ Ամերիկայի միսիօնարաց մի-
ջամտութեանն ի Հայաստան : Մայր հայրեն-
եաց նեղութիւններուն վրայ հրացայտ պեր-
ճախօտութեամբ ճառեց՝ յայտարարելով թէ
Ամերիկայի միսիօնարները մեծապէս պատաս-
խանատու էին : Նորա բերին մեր ազգին գըլ-
խուն այս բոլոր աղէտները, և հիմա մեր ճա-
րահատութեանն օգուտ կը քաղեն իրենց կրօ-
նական շահերը մեր մէջ առաջ տանելու» :

Խաղ վարդապետ Արմաշի նորընծայներէն է, «Եօթնընեակ մէկը, որ Վաղինակ վար-
դապետի հետ Ամերիկայ զրկուեցաւ վերջերս՝
հոգեւոր հովուութեան : Իր պաշտօնին կիրա-
ռութիւնը կրնար ըմբռնել շատ մը ձեւերով,
բայց ո՛չ «հրաբորբ բողբոյն մը» արձակելով
ամերիկեան միսիօնարներուն դէմ և այն ալ՝
Ամերիկայի մէջ, ու մինչեւ իսկ անոնց վերա-
գրելով «մեր ազգին գլխուն եկած բոլոր ա-
ղէտները» : Հայ վարդապետի մը բերնէն ելած
այս յարձակողական խօսքեր այնքան անոր-
դար, այնքան խիստ ու այնքան անտեղի կե-
րեան մեզի, որ մինչեւ իսկ կը վարանինք
հաւատալու թէ այդ տեսակ քարոզ մը խօս-
ուե՞ր է արդարեւ :

Որքերու պաշտպանութեան խնդրին առ-
թիւ ալ, գտնուեցան ազգային թերթեր ու
լոյս տեսնող պաշար մը մընչ փորձեցին մի-
սիօնարներուն դէմ. այնպէս մը ներկայացու-
ցին զանոնք թէ ազգութիւն և հաւատք մու-
ցունել տալ կուզեն մեր տղաքներուն . թէ
ամբողջ հայութիւնը բողբոյն պիտի ընեն .
թէ մինչեւ իսկ գերմանական որբանոց մը
կար ուր հայ որդեգիրները անօթի կը պա-
հէին, ու . . . սայլերու կը լծէին զանոնք : Յե-
տոյ, աստիճանաբար, բողբոյնն ու գան-
գաւանները մեղմացան . թղթակից ու խմբա-
գիր հասկցան թէ սխալներ ու չափազանցու-
թիւն կային իրենց լուրերուն ու անոնց տըր-
ուած խմբագրական մեկնութիւններուն մէջ :
Լաւագոյն չէ՞ր ըլլար առաջուց ճիշդ չափը
պահել գիտնալ, փոխանակ մղուելու ծայրա-

յեղ հոգածութեան մը և nouvelles à sensation-
ներ տալու եւանդէն :

Չափաւորութիւնը օգտակար է ամեն բա-
նի նոյն իսկ ազգասիրութեան ու կրնասփի-
րութեան մէջ :

Ուշադրութեան և լուրջ դատողութեան
արժանի միակ կէտը, այս բոլոր աղմուկներուն
մէջ, սա էր թէ՛ միսիօնարներու ինտամբին յանձ-
նուած հայ որբերուն պէտք է ապահովել մայ-
րենի լեզուի ու կրօնի դաստաւանութիւնը .
Պոլսոյ Պատրիարքարանը և Պայպըլ Հաուզը
բանակցութեան միտան և փոխադարձ կար-
գադրութիւններ ընելու վրայ են : Մեզի պէտք
եղածն ալ այս է :

Ի՞նչ կը նշանակէ, սակայն, այդ միջոցին
եկեղեցւոյ բեմէն ելլալ պոռոտալ միսիօնար-
ներուն դէմ. եթէ այդքան շուտ մուշտած ենք
անոնց մեզի մատուցած ծառայութիւնները,
շատ ետ ու շատ հեռունները երթալու պէտք
չի կայ՝ յիշելու համար . օր չանցնիր որ չիմա-
նանք թէ միսիօնարները սրբանոց մը հաստա-
տեր են Հայաստանի այս կամ այն հեռավոր
անկիւնը կամ որբեր որդեգրեր են : Այդ տա-
րաբաղդ աղաքներուն թիւը այնքան ստուար
է ու փիճակն այնքան խղճալի որ մեր վան-
քերն ալ, Պոլսոյ հիւանդանոցն ու որբանոցն
ալ կրնան պատասխարել, խնամել ու դաստի-
արակել զանոնք և նորէն դուրս միացողներ
պիտի գտնուին : Բարեգործութեան մէջ մըր-
ցումը ազնիւ ու օգտակար է՝ զիրար չի դա-
տափետելու պայմանաւ :

Կը սիրենք հաւատալ որ Ուօրջի հրա-
տարակութիւնը անհիմն ու նպատակաւոր ըլ-
լայ, Ամերիկացւոյ համալիրները հայերուն
վրայէն պակասեցունելու գիտամբ, և կը պա-
սենք կարգաւ Խաղ վարդապետին հերքումը
որուն չերեւանալուն զարմանք կը յայտնէ նաև
Հայք :

ՆԱՄԱԿ ՍՈՒՏԱՆԷՆ

ՏՕՆԿՕԼԱ, 5 օգոստոս

Այն օրէն որ Նեղոս սկսած է բարձրանալ՝ մերթ
խաղաղ մերթ ալեկա՞ծ, իրարանցում մը կը տրե-
այս կողմեր . ամեն օր տրեք վրայ է այս սրահու :
Նոր պատերազմի մը մահազդեցիկ շնչերը լսելու
սարսուռին մէջ ենք : Զօրքեր գունդագունդ կը
հասնախորտին Քասինկէրի մէջ . անգլիական նորեկ
սպարներ կը հասնին գրեթէ ամէն օր, որոնց քիչ
մը թուրիսթական հովերը միտք կը ձգեն Գահի-
րէի Շէփէրտ Օթէլը իր բարձր դասու հիւրերով :

պաշար և ուղղակի երբ անդադար կը զրկուին մի-
շեւ Սալամաթ, ուրիշ քիչ օրէն Եզրագրական բա-
նակը Պէրպէրի վրայ արշաւանք մ'ընելու հասնե-
պին մէջն է :

Արշաւանքն, այս տարի, պիտի յանգի միայն
Պէրպէր գրաւելու և խորթումի վրայ յառաջխա-
ղացութեան համար պիտի սպասուի որ Վատի-Հալ-
Փա և Ասու- Համէտի երկաթուղոյ ուղղակի գիծը
վերջանայ :

Հաւանքէն Սուտանական պատերազմ մը մեծ
կարեւորութիւն չունի շատերուն համար, ինչպէս
ունեցան յունականն ու կրեոտականը : Հարկերնեով
չե՞ն մի համարիր սակայն Գահի-րէի մէջ և այլուր
այն անձեր որ կը պատրաստուին Սուտանի բացման
պատահականութենէն օգուտ քաղել : Քաղակալի-
կն անոնք որ դեռ մեծ բաներ կ'սկսեցան Սուտանէն
որ չգիտեմ՝ դիւթիչ ինչ մ'տեսի իր մէջ :

Այո՛, բազում արեւ տեսնելու դար մ'էր այս,
բայց առա՞ջ, անցած է այն երանուէտ թուականն
երբ ուղտը զոսկի կ'աղբէր՝ Սուտանի մէջ, Քասինկէր
արդարեւ հարստացած ու մեծցած են այս օրերու
չորհիւ . յիշատակը միշտ կենդանի է անոնց սրտին
մէջ :

Անկոֆրօպի մը չափ յուսեռ չըլլալ համար,
հաւանքիք որ Սուտանի վերադարձումը՝ եթէ յուսա-
խարստան իսկ ըլլայ բարձրահայեաց անհատներու, գէթ
խիստ օգտակար պիտի կրնայ ըլլալ Գահի-րէի հայ
գաղթականութեան :

Անհամար քաղաքներու մէջ՝ ասկէ քիչ մը հեռուն
այրեցեալ գօտիի ներքեւ, խառտումած միմադրութի
մը շուրջ, հաղարաւոր ժողովուրդներ՝ խորթումի, Օմ-
տուրման, Պէրպէր, Պահր էլ Դապալ, Տարփուր,
Քորտոֆան և ըն. տգէտ և քաղաքակրթենէ զօրեկ,
այսօր կամ վաղը պէտքը պիտի զգան ցօրեղ և ար-
հեստաւոր ձեւերու :

Գահի-րէի մէջ սա հասարակ կը կարծուի որ Սու-
տանի կլիման սարսափելի տաք կրնէ և թէ հոն գա-
ցողներ կ'ամ կը հիւանդանան կ'ամ կը մեռնին :
Հայր մը, մայր մը՝ որոնց զաւակը պաշտօնով Սու-
տան կուղարձէ՝ այլեւս կորուսած կը համարին զայն,
սուղը կը պատէ չորս կողմերնին, անմիջեւ կ'են,
արիւն արցունք կը թափեն գիշեր ցօրեկ, ա՛յն .
ե՛րբ պիտի վերադառնայ իրենց կորուսեալ Յովսէփ
գեղեցիկը, ու երբ այդ սիրուն էտիկ վերադառնայ
օր մը կենաց էն երջանիկ օրն է այն հօրն ու մօրը
համար : Խեղճ հայր, խեղճ մայր :

Սուտանի հրատապ արեւը չէ՛ այլ իր հայրենի-
րէն, իր սիրելիներէն և աղքային շրջանակներէ՝ զըր-
կուած ըլլալու դառն եղբուրթիւնն է որ աւելի կը
նեղէ հոս պանդխտող հայը : Մենք արեւելցիներս,
դեռ օրրանի ժողովուրդ, տեսակ մը խեղճական ը-
սեմ թէ հոգեկան տպաւորութեան տէր, եւրոպացիներ,
բուռնան խորհելէ շատ հեռի ենք, անոնցմէ շատեր
վարժ են ըսել . «ուր հայ» հոն իմ հայրենիքս :

Այո՛, Սուտանի կլիման տաք է, բայց չոր և
հանդուրժելի է. մարմինն անդադարաւ կը վարժուի
անոր երբ մարդ առաջին մէկ քանի ամիսներն ան-
ցունէ. մի՛ զարմանաք, երբեմն ալ յորդառատ կ'անձ-
րեւէ հոս ամառուան ատեն, ինչպէս անցեալ տարի
երբ անձրեւի հեղեղներու պատճառաւ միտանքին
Տոնկոլայի գրաւումը 15 օրի շափ յետաձգուեցաւ :

Կը հարցուի մեզ Գահի-րէի մէջ ի՞նչ բան կարելի
է ընել այս կողմեր, Թոպուք վաճառականութիւնը որ

ամենէն չափաւորն է . իսկ արհեստական տեսակէ-
տով՝ մեքենագործ, երկաթագործ, ժամագործ, կոշ-
կալար, սափրիչ ևն. արհեստներու գործ չեն պակ-
սիր: Չենք կրնար ապահովել որ հեռուներն երթա-
լու յանդգնութիւնը չարունակ համեմատաբար քա-
ջալերական ըլլայ. յաջողութիւնն, ո՛վ չգիտեր, բիշ
մ'ալ բազմէն և պարագաներէն կախեալ է:

Սուտան գալ ուղղին համար արարելէն և բիշ
մ'ալ անգլիներէն գիտնալ կարեւոր է ու օգտա-
կար: Գահիրէի հայերէ շատեր, գծադրարար, յա-
ճախ տարիներ բոլորելէ վերջ արարախօս չըլնա-
ներու մէջ՝ հազիւ հազ երկու խօսք արարելէն ու-
ղիլ կապիպել կը սովորին: Երեւնի բիշ շատ տա-
րիքնին ստանդներուն, ներքէնք երիտասարդնե-
րուն ալ:

Արդ՝ եթէ կան անգործներ մեր ազգայիննե-
րու մէջ և օր մը Սուտան այցելելու արամաղիր,
անոնք լաւ կընեն եթէ բիշ մ'ալ իրենց պարապ
ժամերն այդ լեզուներու ուսումնասիրութեան նախ-
րեն, ինչքան դառն ալ եղած ըլլայ իրենց արդի
կայսութիւնը:

Այս պարագայից մէջ, կարեւոր է՝ երեկոյեան
վարժարան մ'ունենալ արարելէն ու անգլիներէն լեզու-
ներու ուսուցիչան համար և այդ պարտքն, ըստ մեր
կարծեաց, աւելի Ընթերցարանայ Ընկերութեանն է:

Ս Ո Ւ Տ Ա Ն Յ Ի Մ Ը

Ա Յ Ժ Մ Է Ո Ւ Թ Ի Ի Ն

Հեռագիրը ծանուց քե Բանովաս սեյ
Բասթիլոյի պաննիչը, Միքէլ Կոյի, մահ-
ուան դասապարտուած է զինուորական ա-
սեանի մը կողմէ, ի Մասրիս: Հազիւ շաքար
մը անցաւ այդ եղերական դէպքին վրայէն
ու վճիռը տուած է արդեն: Դասը երկար
սեւած ըլլալու չէ. մնաց որ, իսապաղի ան-
իշխանականը չէր ուզած ծածկել կամ ո-
րանալ իր արարքը: Միայն պնդեց քե մեղ-
սակից չունի:

Սանթա-Ալեքս, ուր զարնուեցաւ Սպա-
նիոյ նախարարացեալ, Սեն-Սեպարիսէն
50 ֆիլովեր հեռու կը գտնուի եւ համա-
շարժ է իր ծովափին բաղնիքներովը: Մի-
քէլ Կոյի — որուն բուն անունը Անձոյիթ
է եղեր, ինչպէս յայտարարուեցաւ դասական
հարցախնդրեան միջոցին — այնքան ին-
քիմիք ճանչցուցած էր Էմիլիո Ռոմուալտիսի
անունով, իբրեւ քղաքից «Իլ Բօրօջօ» լրա-
գրին: Միջախառնակ ու բարեկամ երիտա-
սարդ մըն է, որ յաւ կրքորին մը առած
ըլլալ կերեւէր. իր մայրենի լեզուին չափ
մաքուր կը խօսէր սպաներէն. բժիշկներուն
յայտարարութեանը, մնային խանգարման որ
եւ է նշան չէր կրեր, — առաջին բանը որուն
հետաքրքիր կըլլան անակնկալ ոճի մը գոր-
ծուած աւելն. — ընդհանրապէս, ծայրայեղ
պաշարիւնութիւն ունի եղեր:

Չորս օրէ ի վեր կը բնակէր այն պան-
դոկն ուր իջեւանած էր Պ. Բանովաս. այս
վերջինը, անգամ մը հարցուց իր ֆարս-
դարին քե «ո՞վ կրնայ ըլլալ սա անծանօթ
մարդը որ յաճախ կը քարտէ գիւ ֆա-
րսափարտութեանը», ֆարսդարը պատաս-
խանեց քե իսապաղի է որուն համար կըսեն
քե յակեաց մեկն է. ա՛յ ոչադրութիւն չի
դարձուցին անոր վրայ:

Ոճիքը գործուն է օգոստոս 8ի կիրա-
կին, միջօրէին, երբ Պ. Բանովաս սեղանա-
սուն կերպար. յոգարաններուն կից սրահէ
մը անցած պահուն, ուր կը գտնուէին նաեւ
ուրիշ երկու հոգի, իսապաղի երիտասարդը
գրպանէն ռեվոլվեր մը հանելով յայտնա-
բերեալ հարուած պարպեց նախարարա-
պետին վրայ զոր արիւնջ գետնէն փռեց:

բար երեք հարուած պարպեց նախարարա-
պետին վրայ զոր արիւնջ գետնէն փռեց.
երբ իրեն Բանովաս հասնելով՝ անուանեց
վիճակը տեսաւ, ձեռքի նովահարովը սխա-
ղարեւէ Կոյիի երեսին, մարդասպան ու յա-
րագործ պողպատ. «Ես մարդասպան չեմ.
իմ անիշխանական եղբայրներուս վրէժը
յուծեցի. ձեզի հետ գործ չունիմ, իրեն-
պատասխանեց Կոյի: Եւ առանց ընդդիմո-
թեան թողոց որ ձերբակալեն զինքը:

Թ Ո Ւ Բ Ե Ի Պ Ա Ր Ս Կ Ա Վ Ա Ն Ս Ա Շ Մ Ա Ն Ա Գ Լ Ի Ի Դ Ե Պ Բ Ը

Թուրքեպարական սահմանադրութիւն վրայ
հայ յեղափոխականներու վերադարձած շարժ-
ման լուրը կը մնայ տակաւին անասուց և կը
շարունակէ հետաքրքրել հասարակութիւնը:
Կը շատանանք, այսօր, հրատարակելով եւրո-
պական թերթերու մէջ այդ առթիւ երեւցած
հեռագրական տեղեկութիւնները:

Ժողովուրդը սը ժընեշ կը հրատարակէ
հետեւեալ հեռագիրը Պարսկաստանէն.

ԴԱԻԻԻԻ, 7 օգոստոս. — Խոռվութիւններ ծա-
գեցան թուրքեպարական սահմանադրութիւն վրայ
ուր քրտները աւարի կուտան գիւղերը: Օսմանեան
և պարսկական կառավարութիւնները զօրք խրի-
ցին բարեկարգութիւնը վերահաստատելու համար:

Իսկ Թալիզ, յաջորդ օրը, կը հրատա-
րակէ Կ. Պոլսէն հետեւեալ հեռագիրը որ թըր-
քական ազգերէ կ'երեւի և կէս-պաշտօնա-
կան երեւոյթ մը ունի.

Կ. ՊՈԼԻՍ, 8 օգոստոս. — Այսօր Բ. Դուրը
հետեւեալ հեռագիրը ստացաւ Վանայ կուսակալի
փոխանորդէն.

«Քանի մը հազար (!) հայ խառնաբաններ, օգոստոս
6ին Պարսից սահմանադրութիւն անցնելով՝ Մէլիքի-
ներու ցեղին վրայ յարձակեցան և ստանցմէ երկու
հարիւր հոգի սպաննեցին:

«Սպաննուողներուն մէջ կան կիներ և տղաք:
Յետոյ չարաչար կերպով յոշոտեցին ցեղապետին
կինը և ուրիշ շատերու բիթերը և սկանչները կըտ-
րեցին:»

Պաշտօնապէս կը ծանուցուի թէ կայսերական կա-
ռավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առած է
ոչ միայն այս խռովարարները ձերբակալելու, այլ
Վանայ մէջ որ և է պատահականութիւն արգիլելու
համար:

Բ. Դուրը խնդրեց Պարսիկ կառավարութենէն
ձերբակալել խռովայող խռովները, որոնք կարելի
է թուրք բանակէն հալածուելով վերադառնալ ներս մտնեն
պարսկական սահմաններէն. յանձնարուեցաւ նաեւ
Շահին կառավարութեան որ ժամանաւոր միջոցներ
ձեռք առնուին ապագային արգիլելու համար հայ
յեղափոխականներու կողմէ թրքական հողին վրայ
արշաւանք մը:

* *

Երէկուան Մարտիկոյ Սուրհանդակով առ-
նուած եւրոպական թերթերուն մէջ կը գըտ-
նենք երկու նորագոյն հեռագիրներ:

Կ. ՊՈԼԻՍ, 10 օգոստոս. — «Ֆեսալի» կոչուած
— այսինքն իրենց անձը մահուան նուիրող, — խու-
բէր սահմանադրութիւն անցան ի Վան: Ուրբաքէն ի
վիւր, անոնց քիւր կը հասնի երկուքէն երեք հազարի:

Կ. ՊՈԼԻՍ, 11 օգոստոս. — Արսալին գործոց նա-
խարար Թեմիզի փաշա օգոստոս 8ին ծանուց դի-
պաններուն քե իբր 500 զինեալ հայեր ուղմ Պարս-
կաստան կողմային, անցեալ հինգաբարի անցան
օսմանեան սահմանադրութիւն եւ Հեֆթաւրին գրաւեցին:
Անմիջապէս զինուորական զօրութիւն խրկուեցաւ
անոնց դէմ: Միեւնոյն ժամանակ, բուրժուական
բուրժուական ազգու բողոքագիր մը ուղղեց պարսիկ
կառավարութեան:

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

Ա.

ՈՍԿԵՐԻՉԸ

Սանթիս կը ծնի:
Շահաւէր, շատախօս, շատախօս:
Կամ կաթնուած է կը մեռնի և կամ ստամոքսի
խանգարումէ:

Իր կեանքին կն երջանիկ օրերը «Մեհաբույ»
երկուշաբթիներն են, Հինգրեւոր Սուրբ և կամ ձեր-
ձըր կերթայ և աշխարհք իրենն է:

Ոսկերչին կինը անպատճառ գէր պէտք է ըլլայ:
Շարաթ իրիկուն կամ իրիկ և կիրակի առտու
ժամ կերթայ, անխուսափելի է այս:

Պահու սեւ րըտէնկոթ մը ունի չուխայէ զոր
լուսահագի կէմէնէն շինած է: Կերպար մ'է որ
չի հինար և ձեռուածք մը որուն ժոտան շանցնիր:

Տարին 6 անգամ կը հազնի, Ծնունդին, Զատիկին,
Աստուածածնին, քեհիին ամուսնութեանը, Հոգեգա-
լտեան և վեցերորդ անգամ՝ հոգնելու համար կը
սպասէ որ իր չուխայի զրայիններէն մէկը մեռնի:

Քաղաքականութեամբ կըրպայի ինչպէս կըրպայի
ոտորէ մը... չերամարտածութեամբ:

Իրենց մէջ փրանսերէն գիտցողը հերցուածող
մըն է:

Այսօր խոհարար է որդին բժիշկ ընել և աղջիկը՝
գաշնակահար:

Մանկները, կաղէնները նախ ինք կը սորվի և
հայհոյանքներուն էն ավելները ինք կը սորվեցնէ:

Ճիտը կարճ կըլլայ, փորը մեծ և բանթաօնը
անպատճառ կարճ. Ի հարկին տիրապետիւն ալ կըր-
նայ ընել:

Ազգասէր է... տաթուրքա ժամը 12էն ետքը:

Ոսկերչը կրնայ հաւատք փոխել բայց գուրա-
ներուն գոյնը երբէք, որոնք կը շարունակեն ձերմակ
մնայ:

Պորտիկ խանութի մը մէջ կտարի և ամենէն
լայն սիրտը ունի:

Պարսկա՞ծ օճիք կը դնէ և միշտ սեւ բու-
վաթ:

Յաճախողը կիներու հետ պերճախօս է. իսկ
երբ ընկերութեան մը մէջ գտնուի, միմիայն կո-
շիկներուն նեղութեանը վրայ կը խօսի:

Գումարու բրեքէն կիշնայ և սորով կըլլէ շու-
կան, 20 փարս շահելու համար, բայց օրը 28 րո-
շի մէջէ կուտէ:

Գործի մէջ չի խաբարի, բայց ընտանեկան
յարկին մէջ՝ կը տարակուսի:

Որուն Պատրիարքին և կամ զոնէ գոնէ ֆո-
խանորդին հետ ազգականութիւն ունի:

Տեսակ մը esprit ունի որ չուխային կամարնե-
րէն դուրս այնքան կարծէ որքան Բարային փրանքը
Փարիզի հրապարակին վրայ:

Կնոջը հետ դուրս ելած տոտներ անպատճառ
առջեւէն կը քալէ:

Իրիկունը երբ տուն կերթայ, չանթայ մը ունի
ձեռքը, ինչպէս Խալիքի, ինչպէս Էլի Էֆենդի լրա-
գրիներու տրցակ մը:

Մեծ խնամք կը տանի ձերմակեղաններուն, չա-
պիկը միշտ մաքուր է: Ինչպէս նաեւ թաշկինակը,
որուն պաշտօնը մատներուն կը յանձնէ:

Օղէն կաննէ և օղին կուտայ:

Թաշկինակը ըլլալէ դատ ուրիշ փափագ չունի
աշխարհի վրայ:

Չորս հազար ոսկի շահելուն պէս գործէ կը քաշ-
ուի և կնկանը կուօն ֆիսան մը կը շինէ:

ԹԱՏԱՄԷՍ

Ա.Զ.Գ.Ս.Յ.Ի.Ն. ԼՈՒՐՆԵՐ

Կերեւայ թէ Տ. Ղեւոնդ եպիսկոպոս Շիշ-
մանեանի բողոքագիրը, — զոր հրատարակեցինք
սակից առաջ — իր աղղկեղութիւնը չէ ունե-
ցած Պատրիարքարանի մօտ, վրան զի Կառնոյ
Դաւառ. Ընդհանուր Ժողովը առաջնորդական
ընտրութեան ձեռնարկելով, միաձայնութեամբ
առաջնորդ ընտրեց է Տ. Մեղիքեանի եպիս-
կոպոս Մարտիրոսեանը: Այս երկրորդ անգամն
է որ Իզմիրի նախկին առաջնորդը կընտրուի
այդ պաշտօնին և հաւանական է որ այս ան-
գամ ալ հրաժարի:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ իշխանը անցեալ շաբթու, Պուլքընէ վերագարծին, —ուր այցելութիւն տուած էր Ռուսմանիոյ թագաւորին ու արքայ- յական ընտանիքին,— Կ. Պոլիս գնաց Վառ- նայի ճամբով և երկու օր Սուլթանին հիւր մնալէ ետք Սոփիա վերագարծաւ: Մասնաւո- ղապէս Վիեննայի քաղաքական ակմբոյ մէջ մեծ զարմանք պատճառեց այս անակնկալ ուղեւորութիւն որուն զանազան մեկնութիւն- ներ կը տրուին: Յայտնի է թէ վերջին ա- տեններս Աւստրիոյ և պուլկար իշխանապե- տութեան յարաբերութիւնները ձգտուած են: Ընդհանուր կերպով ալ նշանակութենէ զուրկ չէ Ֆէրտինանտ իշխանին այս այցելութիւնը այն միջոցին երբ պալքանեան փոքր պետու- թիւններու հետեւելիք ընթացքէն կախում ունի արեւելեան խնդրին առնելիք երեւոյթը ու խաղաղութեան պահպանումը: Իշխանը մեծ պատիւներով ընդունուեցաւ Եւլալի պալատին մէջ:

Համասի ու Ռիւդէրի գործակալութիւն- ները որոնք չեն մոռնար Քոնսթանտնուպոլիս չէրձի յօդացաւին սաստկանալը ու Լոնտոնի ձիար- շաներուն ցանկերը հեռագրել Նգիպտոս, եր- կու բառով յիշատակութիւն մը իսկ ըրած չէին այս իշխանական տեղափոխութեան զոր Պոլսոյ ու Եւրոպայի թերթերէն իմացաւ տե- ղական մամուլը:

—Օրէանի Հանրի իշխանը ու Թիւրքնի կոմսը կիրակի առաւօտ մենամարտեցան Բա- րիդի մօտերը: մենամարտը, որ սուրով էր ու շատ կատաղարար մղուեցաւ երկու կողմէ, տեւեց 26 վայրկեան: Հանրի իշխանը ծանր կերպով վիրաւորուեցաւ ուսէն և փորէն. իսկ Թիւրքնի կոմսը թեթեւ վերք մը առաւ ալ ձեռքէն. իշխանը, որ արիւնշուայ գետին ին- կած էր, ոտքի ելլելով՝ ըստ սովորութեան ձեռքը կարկառեց կոմսին որ սեղմեց զայն. իշխանը կառքով Բարիդ դարձաւ ուր անկող- նոյ կը ծառայէ ու կը դարմանուի. Թիւրքնի կոմսը Իտալիա ուղեւորեցաւ:

Մենամարտի այս արդիւնքին վրայ, Ալ- պերթոնէ զօրավարը հրաժարած է ինքն ալ մենամարտելու որոշումէն:

—Կ. Պոլսէն Աթէնքի թերթերուն ուղ- ղուած հեռագրի մը նայելով՝ Բարիդի օամ. դեսպան Միւնիք պէյ եւ պիտի կանչուի, Մեջլէսէի լրագրին ծանօթ դատին ունեցած ելքին պատճառաւ, որ բնաւին պատուաբեր չեղաւ զայն բացողներուն:

—Միակ հեռագիրը որ հասաւ մինչեւ այսօր Կ. Պոլսէն, դեսպանական բանակցու- թեանց նկատմամբ, սա է. «Յունաստան չի կրնալով ճարել պատերազմական տուգանքի գումարը, հաշտութեան բանակցութիւնները կը յապաղին»:

—Պրանսական հանրապետութեան նա- խագահ Պ. Ֆէլլքս Թոն այսօր Տրնքէրկէն ճամբայ կելլայ դէպ ի Քրօնշթատ: Իրեն կրն- կերանան արտաքին գործոց նախարար Պ. Հա- նօթօ և Ժէրլէ ծովակալը: Բէրլինպուրկի մէջ մեծամեծ պատրաստութիւններ տեսնուած են Պ. Ֆէլլքս Թոնի ընդունելութեան համար:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր. Խորվիլ շաբաթ իրիկուն անապշ- տօն կերպիւ Գահիրէ գալով, գիշերը Գուպ- պէի պալատն անցուց և կիրակի վերագար- ձաւ Աղեքամադրիս:

—Այս գիշեր տեղի պիտի ունենայ Խա- լիճը, այրինքն Նեղոսի բարձրացման առթիւ կատարելի ժողովրդական հանդէսը. քաղաքիս կարավարիչ Մահէր փաշա ներկայ պիտի զըս- նուի Խորվիլն կողմէ: Կառավարական պաշ- տօնատունները գոյ են այսօր:

—Պատերազմական պաշտօնատան մէջ հեռագրական գրասենեակ մը պիտի հաստա- տուի, յատկապէս Սուլթանի պատերազմի ըւ- րերուն համար:

—«Պրիթանիա» շոգենաւին մէջ որ Պոմ- պէյէն Սիւէզ հասաւ առջի օրը, երկու հնոյ- պան քոլերայէ բռնուած էին. մէկը մեռաւ, միւսը ապաքինելու վրայ է: Շոգենաւը հա- ղորդակցութիւն չունեցաւ և չիտակ քարան- թիւնայի ղրկուեցաւ:

—Միջերկրականի անգլիական նաւատոր- մին առաջին բաժանումը Գորֆուէն Աւրնա ուղեւորեր է (Ալպանիական ծովեզերք): ԲՆՈ- կրէ զրոյց մը կը յիշէ թէ ի մօտոյ եգիպտա- կան շուրերը պիտի գայ այդ նաւախումբը:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԴԵՊԻՐ

(ՄԵՐ ՄԱՍՆԱԻՈՐ ԹՂԹԱԿՑԵՆ)

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ, 15 օգոստոս

Ան որ անցեալ տարի այս ժամանակներս Պոլիս չէ գտնուած, գաղափար չի կրնար կազմել թէ ինչ ահաբեկիչ աղբիւրութիւն ըրաւ մանաւանդ հայերուն վրայ վերջի երկու օրերուն ղէպը:

Մանրանկար օգոստոս 14 մըն էր որուն հան- ղիստան եղանք:

Անցեալ տարւոնը ըստ հին տուժարի 14ին էր. այս տարւոնը՝ ըստ նոր տուժարի: Ջարդերն ան- գամալաճաքանկայանալու ձգտումներ ունին կարծես:

Բարեբաղդարար շատ մարեցաւ անոպայներու (Պլաշ պաշտօնական բռն է այս) ետանդը, շնորհիւ ոտականութեան որ ոչ Օթէնպուլինն է և ոչ Պոլ- սինը:

Ցեղափոխութիւն՝ ազատութեան, կենաց և ի- րաւունքի պաշտպանման, զապաւորներու յեղաշրջման համար, յեղափոխութիւն բարբերու բարեփոխման համար, այս ամենը տեսնուած, սրտմուտ, իրական բաներ են, բայց... կէս ձմերուկի համար ցոյց և յեղափոխութիւն, ամիկայ luxu մըն է գոր միայն 1882 Յունիս 11է տեղեցած արտօնները կրնան տալ ինքզինքնուն:

Կերեւայ թէ ինչպէս որ քսան տարին անգամ մը ռուսերը և թուրքերը պէտք է կուտին, նոյնպէս տասնըօթը տարին անգամ մը պէտք է որ Աղեք- սանդրիոյ արտօնները իրենց նապալքի մարդանքները կատարեն... քրիստոնէից կոնսոկին վրայ:

Գանք եղելութեանց:

Ուրբաթ, կէս օրէն յետոյ ժամը 4ին, խառ- լացի մը Աթթարին փողոցի մէջ մրգավաճառէն ձմերուկ մը կը ստիպուի 3 դաշէկանի, սրայմանու որ ձմերուկը կարմիր և անուշ ըլլար: Ձմերուկը սպասուած տեքը և հոն չունեցաւ, խաղաղին արդէն բորբոսած... Օրէանի իշխանին բռնած ընթացքէն, կուրիլ սկսաւ արար մրգավաճառին հետ:

Այդ միջոցին, պէրպէրի մը որուն քաջութիւնը և ոյժը Աթթարին փողոցի բնակիչներուն ծանօթ է, իրրեւ նոր Արկիստա՝ de triste memoire, մի- ջամտեց երկու կուտողներուն միջեւ և այն գերը ստանձնել ուղեց ինչ որ չի կրցան կատարել ամ- րոջը գեղարմները հաւաքարար վերջի պատերազ- մին առթիւ:

Պէրպէրին կը պնդէր թէ ձմերուկը պատուա-

կան է. իսկ խաղաղին ճիշտ հակառակը կը փառ- տարանէր:

Որ ոչ լուիցէ ունիւմը... ահա պէրպէրին հաւատքը. և ապտակ մը, երկու ապտակ, երեք ապ- տակ իջեցուց խաղաղին գլխուն: Կրակ կտրեցաւ Ալպերթոնէյի և Թիւրքնի կոմսին արեւակիցը և մէկ երկու ք չըսած ու առանց վիպի, ձմերուկին համար գործածուած դանակը հակառակորդին փորը մտեց:

Պէրպէրին արիւնաթաթաւ գետին փռուեցաւ: Ոտիկանութիւնը անմիջապէս ձերբակալեց ոճ- րագործը:

Ցոյց այս շատ սովորական մարդասպանութիւ- նը ունեցին աղբիւրութեան տակ, արտասովոր ետան- ղով թաղում մը պատրաստեցին ձմերուկին զոհ գա- ցող պէրպէրին:

Այդ անհատական կոխի կամ ոճրին հետեւան- քը միջաղբային կերպարանք մը առաւ, երբ մեռե- լական թափօրը նայն իսկ ոճիրը գործուած վայրը հասաւ:

Հազարաւոր տեղացի արարներ որ յուզաբնա- ւորութեան կը հետեւէին սկսան սոսկալի հայայտանք- ներ արձակել քրիստոնէից դէմ:

Ամբոխը խորտակեց այն յոյն նախախաճառին կողակը ուր ապաստանած էր խաղաղին առջի օրը և ամբողջովին թալլեց զայն: Ուրիշ շատ մը խա- նութիւններ քիչ շատ փնասուեցան:

Աթթարին ամբողջ թաղը ահաբեկութեան մէջ էր. տուններ և խանութներու փեղկերը անխնայ- թի մէջ գոցուեցան: Փողոցին արարները սպառնա- լից խօսքեր կուղղէին պատուհաններու ետեւ ապաս- տանած քրիստոնէից որոնց մէջէն շատեր ուղղու- վէրի հարուածներ տեղացոյցին ամբոխին վրայ, ա- տանց բարեբաղդարար, փնտս հայտնելու:

Տեղական և անգլիական ոտականութիւնը խառ- վութեան վայրը շտապեց և շատ դժուարութիւն- ներէ ետք հաղիւ կրցան խաղաղեցնել այդ աղբիւ- յոյց ամբոխը որ մեռելը թաղեղին վերջը գնաց հա- չիչի մուխին մէջ մռնալ իրեն կատաղութիւնը:

Քաղաքիս կատաղարիչ Խաղաղ փաշա Ատալիի ներկայութիւնը շատ նպաստեց վերջ մը տալու շը- փոթութեան, առանց որոյ զուցէ այս գիշեր շատ տեղի ծանր հետեւանքներ ունենար:

ՕՐԵՆՔԻ ՎՐԱՅ ԳԱՂԱՓԱՐ

Convention Համաձայնութիւն, Contrat Պայմանագիր, Obligation Պարտաւորութիւն հոմանիշ բառեր չեն թէեւ, սակայն սոխառ- կան կերպով, մէկը միւսին տեղ կը գործած- ուին անտարբեր: Convention կամ pactes ընդ- հանուր բառ մըն է, որ կը նշանակէ ո՛ր է համաձայնութիւն մը երկու կամ աւելի ան- ձանց միջև միեւնոյն առարկայի վրայ, սրա- տաւորիչ նպատակ մը ունենալով կամ չունե- նալով:

Contratն conventionի տեսակ մըն է, որ կատարելապէս պարտաւորիչ նպատակաւ կը պատրաստուի:

Conventionը ոչ-պարտաւորիչ կրնայ ըլլալ, contratն միշտ պարտաւորիչ է:

Ձեզ հետ կը համանայնիմ այս ինչ մար- դը տեսնել երթալու, այս convention մըն է և ոչ contrat, չէք կրնալ ստիպել զիս այդ- խոստումն կատարելու, որովհետեւ օրինական կերպով կապուած չեմ ձեզ: Ձեզի 10,000 դահեկան վճարել կը պարտաւորիմ, աւասիկ contrat մը, որովհետեւ օրինական տեսակէտով ձեզ կապուեցայ և որով կրնաք խոստմանս կատարումը իրաւամբ պահանջել:

Սակայն քանի որ contratն՝ երկու կամ աւելի անձերի մէջ համաձայնութեան գոյու-

Թիւն մը կենթադրէ, ուստի contract միշտ convention մըն է, բայց ոչ conventionը միշտ contract, որովհետեւ սոյն վերջինը (convention) ոչ-պարտաւորիչ ալ կրնայ ըլլալ:

Կառավարական ընդհանուր օրէնքները, որ լոկ անհատները պարտաւորեցնող կանոններու ամփոփումներն են, կը զբաղին միայն contract-ներով: Զը միւսմամբ ըսել թէ contract զանազանութիւն պէտք է sollicitation կոչուած դաշնագրէն, որ տակաւին չընդունուած խօստում մը կը նշանակէ և ո՛ր և է պարտականութիւն մը չի ծնանիր. որովհետեւ մեր միայնակ կամքքը չի կրնար մեզ ուրիշին կապել. ահա այս է արարական օրէնագիտութեան վա՛սքը միւս ձեռքէն անուանած խօստումը, որ շատ դեբեր խաղացած և շատ իրաւունքներու կորուստեան պատճառ եղած է Տաճկաստանի խել մը տգէտ փաստաբան և դատաւորներու ձեռքէրուն մէջ, և նոյնը պատահած է և կը պատահի եւրոպական դատարաններու մէջ:

Obligationը կապ մըն է որ contractէն կարտադրուի, և որոյ միջոցաւ contractէն կատարելու պիտիքն դործադրելու ստիպողականութիւնը յառաջ կուգայ:

Բայց նաեւ obligationը որ engagement ալ կըսուի (vinculum juris), contractէն ուրիշ պատճառներէ ալ ծագում կրնայ առնուլ. — օրէնքէն (de loi), կամ անձնական դէպքէն (fait personnel) դէպ ի պարտաւորիչ անհատ:

Օրէնքէն, զորօրինակ, խնամակալ կամ պաշտպան (tuteur) ըլլալու պարտականութիւնը, անձնական դէպքէն, զորօրինակ, մեր թերութեամբ և օրինազանցութեամբ դոյաշած վրաններու հատուցման պարտականութիւնը: Առեւտրականի կենսականը կազմող այս կարեւոր կէտերու սահման և վախճանին վրայ այդպիսի ծանօթութիւն տալէ յետոյ, պիտի որոշենք շարունակել անոնց տեսակները, ստորաբաժանումները և գործնականը:

Վնասելի ասեցի փաստաբան
Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Ա Ձ Դ

Ակնաբոյժ Sofpor Էսմեռեանի հրահանգի համեմատ՝ պատահաւ եւ ամեն առաւօս մինչեւ ժամը 8 ձիաբար դարմանել աչքի հիւանդները բնակարանիս մէջ՝ Եկեղեցի փողոց թիւ 24 սան վերի յարկը:

Դեղագործ
ՍԱՐԳԻՍ ՔԱԶԱՆՃԵԱՆ

Ա Ձ Դ

Ուսուցչուհի մը որ Պոլսոյ կարեւոր քաղի մը բարձրագոյն վարժարաններէն միոյն մէջ պատշաճ վարած է եւ երկու ամեկ ի վեր քաղաքս կը գտնուի, կը փափաքի հայերէնի դասեր տալ տուներու մէջ այցելութեամբ:

Այն ծնողք որ իրենց զաւակներն օտար վարժարան կը դնեն եւ որ մայրենի լեզուն անոնց ուսուցանել տալ կուզեն, առիթն կրնան օգտուիլ:

Դիմել ՓԱՐՈՍԻ Խմբագրատունը:

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստաֆուի, մորթի եւ ջղային հիւանդութեանց: Կ'ընդունի իրենց դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիքս Զօրիի ճիւղ դէմք. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կես օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւք ձրի կը դարմանուին:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ քաղքի

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՕՂԼՈՒ Գ Ա Ղ Ի Բ Է

Գնում և վաճառում աւթեթուղթերու. — Կանխավճար արժեթուղթերու վրայ. — Կատանձնէ յաճախողներու հաշույն համար գանձումներ ընել Եղիպտոսի և արտասահմանի գլխաւոր քաղաքներու մէջ. — Պայմանաժամաւոր վաճառում ամեն տեսակ պարզեւաւոր արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պուլսք փողոց Եղիպտոսի հետագրատուն դէմ Բէսմաչօղլու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզպէթիյէ, Պիւլպիւլեանի օթէլին քովընտրի կամարակապ փողոցը բացած խանութին մէջ ամենէն դժուարահաճները զահայներու եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սովորական գիններով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻՆԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՍՈՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսորէս	օմնիպ.	էքսորէս	օմնիպիւս	
		1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1, 2 4,5	1,2,3,4,5	1, 2 4,5	1 2 3	կարգ
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	երեկ.
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առա.
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	12 35
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 44
Տամանհուր	երեկոյ	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	1 54
	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ալեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՍՈՆԴՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷՒ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		օմնիպ.	կէս ուղ.	օմնիպ.	էքսորէս	խառն	օմնիպ.	էքսորէս	օմնիպիւս	
		1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1 2 4,5	առա.	1,2,3,4,5	1 2 4,5	1 2 3	կարգ
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	առա.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	առա.	երեկ.	երեկ.	երեկ.	առա.
	»	—	8 6	8 58	10 2	առա.	երեկ.	երեկ.	երեկ.	առա.
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷ2

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷ2-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ			ԿԱՅԱՐԱՆՔ		
ԱՌԱՌՈՏ			ԱՌԱՌՈՏ		
ԵՐԵԿՈՅ			ԵՐԵԿՈՅ		
Գահիրէ	մեկ.	11 40	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50
Պէնհա	ժամ.	12 28	» կայարան	»	—
	մեկ.	12 33	» երեկոյ	»	3 30
Զակազիկ	ժամ.	1 34	Խամաիլիա	»	1 20
	մեկ.	1 44	»	»	7 5
Խամաիլիա	մեկ.	3 40	Զակազիկ	ժամ.	3 7
	»	»	»	մեկ.	3 17
Սիւէզ կայարան	ժամ.	—	Պէնհա	ժամ.	4 13
	»	»	»	մեկ.	4 17
Տօք (բարափ)	ժամ.	6 55	Գահիրէ	ժամ.	5 5